ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Իվետա Մանուկյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ավագ լաբորանտ

Անչափահասների շեղվող և հանցավոր վարքագիծը պայմանավորված է այն նույն գործոններով, ինչ որ չափահասներինը[1]: Անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի յուրահատուկ պատճառներ չկան, սակայն անչափահասների տարիքից բխող սոցիալական, հոգեբանական առանձնահատկությունների պատճառով այդ գործոնների ազդեցությունը յուրահատուկ ձևով է դրսևորվում:

Կրիմինալոգիայում համընդհանուր ճանաչում է ստացել այն տեսակետը, որ հանցավոր և շեղվող վարքագծի պատճառների զգալի մասը պայմանավորված է անձի ընտանեկան դաստիարակության, ընտանիքում տիրող մթնոլորտի, ընտանիքի անդամների փոխհարաբերություններով: Հետևաբար անչափահասների հանցավորության գործոնների բացահայտման համար կարևոր են երեխայի ընտանիքում առկա խնդիրների վերհանումը, դրա հետ կապված հանգամանքների վերլուծությունը:

Անչափահասների շեղվող և հանցավոր վարքագիծը զգալի չափով պայմանավորված է ընտանիքի անբարենպաստ վիճակով, որի նախադրյալներ են նյութական, կենցաղային ծանր պայմանները, ծնողների առողջական վատ վիճակը, նրանց կրթական ցածր մակարդակը և այլն[2]: Նյութական վատ պայմանները, աղքատությունը նպաստում են ընտանիքում լարված մթնոլորտի ձևավորմանը, հնարավորություն չեն տալիս լիարժեք բավարարելու ոչ միայն կենսական, այլև հոգևոր պահանջմունքները: Նշված գործոնները որոշ դեպքերում բացասական ազդեցություն են ունենում անչափահասի սոցիալականացման և նրա վարքագծի վրա: Դրությունը ավելի է բարդանում ծնողների գործազրկության դեպքում: Վերջինս ոչ միայն նպաստում է ընտանիքի նյութական դրության վատթարացմանը, այլև բացասական խոր ազդեցություն է ունենում գործազուրկի հոգեբանության վրա: Նա իրեն զգում է ոչ պիտանի, անտեսված, անարդարացիորեն ոտնահարված, չգնահատված, իր վիճակի համար մեղադրում է հասարակությանը: Այստեղից էլ գործազուրկին բնորոշ ագրեսիվությունը, թշնամանքը, մեղքի զգացումը, անլիարժեքության բարդույթը, օտարվածությունը, ընկճվածությունը[3]: Պարզ է, որ այդ վիճակում գտնվող ծնողը չի կարող իրականացնել իր պարտականությունը: Այնինչ անչափահասի սոցիալականացման համար շատ կարևոր են ծնողների հսկողությունը, նրանց հետ շփումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ եթե ծնողները երեխաների նկատմամբ որոշակի հսկողություն են սահմանում, սահմանափակում դրսում գտնվելու չափը, նշում դեռահասի տուն վերադառնելու ժամանակը, ապա

[1] Տե՛ս **Гилинский Я. И.** Девианталогия. Социология преступности, наркотизма, проституции, самоубийств и других «отклонений» 2-е изд., испр. ի доп., СПб., 2007, էջ 462:
[2] Տե՛ս **Ермаков В., Крюкова Н.** Несовершеннолетние преступники., М., 1999, էջ 63:
[3] Տե՛ս **Аствацатуров С.** Безработные: проблемы и решения.// Меняющеесия общество., Ер., 2001, N 1-2, էջ 16:

դա մի քանի անգամ նվազեցնում է շեղվող վարքագիծ դրսևորելու կամ նման վարքագծից տուժելու ռիսկը[1]:

Կրիմինալոգիական տեսանկյունից կարևոր է պարզել, թե ինչ ընտանիքում է ապրում երեխան: Անձի լիարժեք ձևավորման համար ծնողների ազդեցությունը, նրանց ներկայությունը, երեխայի և նրանց միջև ջերմ հուզական կապերի հաստատումը անգնահատելի են: Ակնհայտ է, որ ծնողների ամուսնալուծությունը կամ առանձին ապրելու հանգամանքը, ինչպես նաև դեռահասի՝ իր ծնողներից առանձին ապրելը էական հանցածին գործոններ են: Դա, ըստ էության, մանկալքության դրսևորման յուրօրինակ ձև է: Իսկ մանկալքությունը հանգեցնում է դեռահասի դեպրիվացիայի: Երեխայի դեպրիվացիան ընտանիքում այն երևույթն է, երբ նա հնարավորություններ և անհրաժեշտ պայմաններ չունի յուրացնելու իրեն անհրաժեշտ սոցիալական դերերը, ձեռք բերելու այն որակները, որոնք անհրաժեշտ են սոցիալական իրականությունը համարժեք ընդունելու, գնահատելու և որոշակի իրավիճակում գիտակից որոշումներ կայացնելու, ինչպես նաև սեփական գործողությունները վերահսկելու համար: Դեպրիվացիան կարող է քրեածին նշանակություն ունենալ: Ընդ որում, դեպրիվացիայի կարող է հանգեցնել ոչ միայն ծնողների հետ համատեղ չապրելու, այլև ընտանիքի ոչ լրիվ լինելու փաստը: Պատահական չէ, որ հանցագործության համար դատապարտված, շեղվող վարքագծի համար հաշվառման վերցված և իրավահպատակ վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դատապարտված և շեղվող վարքագծի համար հաշվառման վերցված անչափահասների մեջ կիսատ ընտանիքներում ապրողների թիվը մոտ երկու անգամ գերազանցում է իրավահպատակ վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում համանման ընտանիքներում ապրողների թիվը[2]:

Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունեն անչափահասների ծնողների տարիքը, կրթությունն ու մասնագիտությունը, որոնք, որպես կանոն, ազդում են ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակի, ընտանիքում փոխհարաբերությունները ճիշտ կառուցելու ընդունակության և անչափահասին ճիշտ դաստիարակելու ու ճիշտ ուղղու վրա դնելու նրանց գործունեության վրա:

Ընտանիքում առկա մթնոլորտն էական ազդեցություն է ունենում անչափահասի սոցիալականացման, ինքնադրսևորման, ինքնաարտահայտման վրա: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ և շատ կարևոր է պարզել, թե ինչպիսին է ընտանիքում առկա մթնոլորտը, թե ինչպիսին են ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, և այդ ամենը ինչպես է գնահատում հենց ինքը՝ անչափահասը:

Կրիմինալոգիական տարբեր հետազոտությունները ցույց են տվել, որ հուզական ջերմ կապերի բացակայությունը ընտանիքի անդամների միջև, անչափահասին անտեսելը, անչափահասի նկատմամբ բռնությունը, դաժան, անմարդկային, կոպիտ վերաբերմունքը հանցածին նշանակություն ունեն[3]: Ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառումը, ծնողների մանկավարժական տարրական

---

[1] Տե՛ս **Ara Gabuzyan, Anna Margaryan, Martin Killias, Josine Junger-Tas,** etc. Juvenile Delinquency in Europe and Beyond: Results of the Second International Self-Reported Study. Springer 2009, ISBN-978-0-387-95982-5:

[2] Տե՛ս **Գաբուզյան Ա. Մարգարյան Ա. Առաքելյան և ուրիշ.** Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2010թ. էջ 27:

[3] Տե՛ս **Антонян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 109, **Антонян Ю. М.** Насилие. Человек. Общество. М., 2001, էջ 3:

գիտելիքների պակասը, ծնողների և անչափահասների միջև խիստ ձևական, կանոնակարգված հարաբերությունները կարող են էական հանցածին նշանակություն ունենալ:

Պատահական չէ, որ ՄԱԿ-ի ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) շեշտում են այնպիսի միջոցառումների և ծրագրերի մշակման անհրաժեշտությունը, որոնք նպատակաուղղված կլինեն ծնողներին՝ երեխայի զարգացման և խնամքի հարցում ծնողական դերի ու պարտականությունների վերաբերյալ ուսուցում անցնելու հնարավորություն ընձեռելուն (16-րդ կետ):

Անչափահասների հանցավոր և շեղվող վարքագծին նպաստող կարևոր գործոններից է միկրոմիջավայրը: Մասնավորապես ընկերական շրջապատը, ուսումնական կոլեկտիվը, անձի բնակության վայրի անմիջական միկրոմիջավայրը: Փաստորեն, անձին դաստիարակում է նրան շրջապատող ամբողջ սոցիալական միջավայրը, ընդ որում՝ բացի ընտանիքից, անձի դաստիարակության, նրա ձևավորման վրա մեծ դեր է ունենում սոցիալական միջավայրի այն խումբը, որը տվյալ անձի համար դառնում է ռեֆերենտային: Ռեֆերենտային է այն խումբը, որի արժեքային համակարգը ամբողջությամբ ընդունվում է անձի կողմից, և որտեղ անձը հոգեբանական տեսանկյունից առավել լավ է զգում: Անձը ամեն ինչ անում է այդ խմբում ընդգրկվելու, այնտեղ ամրապնդվելու համար: Խմբի որոշումները դառնում են անվերապահորեն ընդունելի: Ակնհայտ է, եթե ռեֆերենտային խումբը հակասոցիալական ուղղվածություն ունի, ապա անձը վաղ թե ուշ հանցավոր ուղի է բռնելու: Հետազոտությունները ցույց են տվել, որ հանցածին գործոններ են նաև հարևանների միջև հաճախակի կոնֆլիկտները, բռնությունները, հարևանների մեջ դատապարտված, թմրամիջոցներ գործածող, ալկոհոլը չարաշահող անձանց առկայությունը, թաղամասում լքված շինությունների առկայությունը, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում թմրամիջոցներ գործածելու կամ շեղվող վարքագծի այլ տեսակների դրսևորման համար[1]:

Անչափահասների շեղվող և հանցավոր վարքագծի վրա ազդող էական գործոններից է նրանց վերաբերմունքը դպրոցի և ուսման նկատմամբ: Դպրոցը հիմնականում նպատակաուղղված է գիտելիքներ տալուն, իսկ աշակերտների մեջ տարբեր հետաքրքրությունների ձևավորմանը, նրանց ինքնուրույն մտածողության խրախուսմանը այդքան էլ մեծ ուշադրություն չեն դարձնում:

ՄԱԿ-ի ուղենիշները անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիադյան ուղենիշներ) խիստ կարևորում են կրթական համակարգերի դերը անչափահասների հանցավորության կանխման գործում: Նշված ուղենիշների 21-րդ կետի համաձայն՝ կրթական համակարգերը, իրենց կրթական և մասնագիտական ուսուցման գործունեությունից բացի, պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն երեխայի ինքնուրույնության, տաղանդների, հոգեկան և ֆիզիկական կարողությունների խթանմանը և զարգացմանը, ուսուցանեն հիմնական արժեքները և ձևավորեն հարգանք երեխայի մշակութային ինքնության և պատկերացումների, երեխայի բնակության երկրում ընդունված սոցիալական արժեքների, երեխայի սեփական երկրից տարբերվող քաղաքակրթությունների և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների և այլնի նկատմամբ:

---

[1] Տե՛ս **Ara Gabuzyan, Anna Margaryan, Martin Killias, Josine Junger-Tas, etc.** նշված աշխատությունը:

Անչափահասների կողմից հանցանք կատարելու դրդապատճառների հետազոտությունները ցույց են տվել, որ դրանց մեջ բավականին մեծ տեղ է գրավում ձանձրույթը (մոտ12%) [1]: Այդ է պատճառը, որ անչափահասների հանցավոր և շեղվող վարքագծին նպաստող գործոններից է նրանց ազատ ժամանցի վատ կազմակերպումը: Կրիմինալոգիական տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև անչափահասի մոտ վատ սովորությունների առկայությունը: Ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործումը անձի շեղվող վարքագծի ձևերից է և հաճախ նախորդում է հանցավոր վարքագծին, վկայում է այդպիսի վարքագիծ դրսևորելու հավանականության մասին և կրիմինալոգիական կանխատեսման հիմք հանդիսանում: Անչափահասների ազատ ժամանցի հիմնական ձևերն են ինտերնետ ակումբներ, սրճարան հաճախելը, ընկերների հետ շփվելը, զբոսանքը: Սակավաթիվ են մշակութային, սպորտային հաստատությունները, որտեղ կարելի է բովանդակալից կազմակերպել անչափահասների ազատ ժամանցը: Բոլորն էլ մեծ մասամբ վճարովի են, հետևաբար ոչ բոլորին հասանելի:

Ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ անչափահասների հանցավորության կանխման հիմնական ուղղություններից պետք է լինեն նրանց նկատմամբ հսկողության ուժեղացումը, շրջապատի անբարենպաստ ազդեցության չեզոքացումը կամ մեղմացումը, ծնողներին տարրական մանկավարժական գիտելիքներ տալը, անապահով ընտանիքներին օգնություն ցույց տալը, անչափահասին ինքնահաստատման պահանջմունքի բավարարման սոցիալապես օգտակար ձևերին ծանոթացնելը, դրանք անչափահասի մեջ ձևավորելը, անչափահասների ազատ ժամանցի բովանդակալից կազմակերպումը, դպրոցում և այլ կրթական հաստատություններում նրանց տաղանդների, ինքնուրույնության, կարողությունների խթանմանն ուղղված գործունեությունը:

О НЕКОТОРЫХ ФАКТОРАХ, ВЛИЯЮЩИХ НА ПРЕСТУПНОСТЬ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Ивета Манукян
Старший лаборант Кафедры уголовного права ЕГУ

Факторами, влияющими на преступность несовершеннолетних, являются отсутствие внутрисемейных эмоциональных связей, нехватка педагогических знаний родителей, безработность родителей, негативные явления в сфере активности несовершеннолетних, плохая организация свободного времени.

По мнению автора, основными направлениями предотвращения преступности несовершеннолетних являются повышение контроля над ними, нейтрализация негативного влияния среды, повышение уровня педагогических знаний родителей, оказание помощи необеспеченным семьям, ознакомление несовершеннолетних с социально полезными видами самореализации, организация свободного времени несовершеннолетних, деятельность, нацеленная на поощрение их талантов, самостоятельности, способностей в школах и других учебных заведениях.

[1] Տե՛ս Лунеев В.В. Мотивация преступного поведения М., 1991, էջ167:

CERTAIN ISSUES OF JUVENILE CRIME FACTORS

Iveta Manukyan
Senior Assistant of the YSU Chair of Criminal Law

Some factors impacting juvenile crime include the absence of emotional connections in the family, lack of basic educational skills of parents, parents' unemployment, negative phenomena in the micro-environment of minors, poor organization of leisure.

In the author's opinion the main directions of the prevention of juvenile crime must include supervision activation, neutralization of the negative impact of environment, raising awareness of parents, assistance to poor families, introduction and development of socially useful ways of self-establishment to the juveniles, efficient organization of leisure, activity directed at their talents, skills, development at school and other educational facilities.

Բանալի բառեր - *անչափահաս, հանցավորություն, շեղվող վարքագիծ, հանցավոր վարքագիծ, ռեֆերենտային խումբ*
Ключевые слова: *несовершеннолетний, преступность, девиантное поведение, преступное поведение, референтная группа.*
Key words: *juvenile, crime, deviant behavior, criminal behavior, referent group.*